Գիրքը լուսապատճենահանվել է
"Համահայկական Էլ. Գրադարան"
կայքի՝ www.freebooks.do.am
կողմից եւ ներկայացվում է իր
այցելուների ուշադրությանը:

The book created by "PanArmenian E. Library"

Գիրքը կարող է
օգտագործվել միայն ընթերցանության համար...
For more info: www.freebooks.do.am

ԴՈՒՔ ԼՈՒՍԱԼՈՒՄ ԿԱՐՈՂ ԵՔ ՁԵՐ ԼԵՌՈՒՄՆ ՈՒՆԵՆԱԼ ՀԱՅԱՍՏԱՆ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ ԵՎ ԻՆՔՆԵՐԴ
ԷՈՒՄՈՊԱՏԵԼԱՀԱՆԵԼ ԳՐՔԵՐ:

ԹԿԱՅԻՆ ԳՐՔԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՔ
ԻՄԱՆԱԼ "ՀԱՄԱՀԱՅԱԿԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ" ԿԱՅՔԻՆ՝

www.freebooks.do.am

ՀԱՐՀԱՎԱՆ ԵՆՔ, ՈՐ ՕԳՏՎՈՒՄ ԵՔ ՄԵՐ ԿԱՅՔԻՑ:
ՑԱՆԿԱՆՈՒՄ ԵՆՔ ՀԱԿԵԼԻ ՀԱՂԹԵՑԱՆՈՒԹՅՈՒՆ:

ԳՐԵՔ ՄԵԶ՝ freebooks@rambler.ru

ԱՍՈՂԻԿ

ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ

Սոյն գիրքը հրատարակուեց մեկենասութեամբ
Մեծայարգ Տիար Ռուդիկ Բալասանեանի
Ի յիշատակ իր հանգուցեալ մօր՝ բարեպաշտուհի
Ովսաննա Բակունցի

Նկարիչ՝ Խորեն Հակոբյան

ԱՍՈՂԻԿ

Մեր տերտեր Սուքտոց

ՊՈԵՄ

ԵՐԵՎԱՆ, «ԱՐԵՎԻԿ»
1991

Գլուխ-Գ

Երգեցէք որդիք երգ նոր ցնծութեան,
Քանզի մեզ այսօր ամուլ արգանդից
Ծնուեց սրբօրէն մի մանուկ արդար ..
Եւ տուք օրհնութիւն, որդիք հայկազեան,
Զի ծնաւ մարմնով, որ մեզ պարգեւի
Հոգի զուարթուն, միտք մեծապայծառ·

Այսօր մեզ ծագեաց լոյսը երկնային,
Այսօր լրացաւ խոստումն հայրական
Այսօր մեզ ծաղկեաց յարմատոյն հայկեան
Ճիւղը բողբոջուն՝ մարմնով սլացիկ,
Ծաղիկն հայրածին մաքրազարդ փայլով,
Իր հրաշագեղ կախարդիչ բոյրով.

Յար զուարճացիր, երկիր հայկազեան
Եւ դու խնդա յոյժ, Տարօնոյ աշխարհ
Բարեբանեցէք հոգեւոր երգով—
Երջանիկ որդու ծնունդը անճառ,
Որ մեզ պարգեւեց լոյսի առաւօտ
Եւ արեգակի շող զուարթարար

Սուրբ

— Փառք ամենազօր հանճարիդ գիւտին,
— Փառք ամենասուրբ ուսուցչիդ գործին
Ով դու սուրբ հանճար,
Ով Տարօնածին հայոց մեծ փրկիչ,
Որ արժանապէս անսկզբնականը
Դարձրիր սուրբ Սկիզբ
Եւ այդ սկիզբով դու արբեցրիր քո մանուկներին,
Որ կարօտ էին ուսման կրակին
Բերկրեցրիր նրանց՝ փրկչական կանչով,
Գերեցիր նրանց՝ քաղցրածոր խօսքով,
Տիրեցիր նրանց՝ փայլմամբ քո մտքի,
Ու հալածեցիր մարդասիրապէս
Խաւարն անզգայ ու վայրաբարոյ
Լուսազարդեցիր
Քո աշակերտաց բոյլն հրաշազարդ,
Կանչեցիր նրանց
Բարեբանեալի ձայնով գթասիրտ,
Փարուեցիր նրանց
Մէկ առ մէկ, հերթով
Ու քեզ շուրջ բոլոր
Գրկեցին նրանք,

Որպէս զուարթունք
Իրենց արարչին
Ու բազմած փառաց Աթոռի վրայ
Վարդապետեցիր քո զաւակներին,
Կերտեցիր նրանց միտքը դանդաղկոտ,
Հերկեցիր նրանց սրտերն անջրդի,
Եւ տառապելով երկնեցիր երկար
Յորդեգրութեան բազում շնորհներ
Աշխարհ բերելով
Ուսուցանեցիր գրերն հայրենի
Քո զաւակներին առաքելական,
Որ ընթանային զերթ նոր առաքելալք
Կոչմամբ ինքնահաստ ու նուիրական
Եւ չընկրկէին յորձանքից վարար
Ու յարձակումից վայրագ օտարաց
Փառք ամենազօր հանճարիդ գիւտին,
— Փառք ամենասուրբ ուսուցչիդ գործին
Աշակերտները քո հոգեղինաց
Իրենց սրտերում քեզ ընդունեցին խորունկ հաւատով,
Լերկ անապատի ծարաւեալների սուրբ աղերսներով,
Իսկ դու հաւատքով ծաղկեցրիր նրանց
Սուրբ երանութեամբ քո ազնիւ բերքի
Եւ պարգեւեցիր ջուրը փրկական,
Որ կարկաչում է վերագոչելով
Իր կանչով գերող, իր ձայնով մաքուր
Ես էլ խառնելով ձայնն իմ այդ հոսքին
Բարբառում եմ քեզ
Աշակերտիմ եւ հետեւիմ
— Փառք ամենազօր հանճարիդ գիւտին,
— Փառք ամենասուրբ ուսուցչիդ գործին

Տաղք

Դու՝ Տաճար, Տաճա՛ր,
Դու անճառ խորհուրդ սրբազան գրի,
Դու իմաստութեամբ տնօրինեցիր
եւ վայելչապէս
Տեառնագրելով
Տառագրեցիր
Հողէ-հրեղէն Այբուբենն հայոց
Մարգարէական քո տեսիլքներով,
Թագաւորական քո հոգածութեամբ,
Քահանայական քո շնորհներով,
Վարդապետական քո իմաստութեամբ
Բարբառն հայրենի երգաբանեցիր
Քո անճառելի լի խոնարհութեամբ,
Քո մենակեացի զօրեղ ճգնութեամբ,
Ողորմածութեան քո պարգեւներով
Դու աշխարհ բերիր քաջալերութեամբ
Աստուածապարգեւ գիրն Ասքանազեան
Դու՝ աստուածամուխ,
Դու աստուածամերձ,
Վայելչութիւնը ըմպեցիր անյագ
Բարեյաղթութեան բոլոր կերպերով
եւ քո քաղցրատուր սուրբ նուիրումով

Լսեցիր ձայնը երկնից ղօղանջող
Դու եղար լրումն հայոց սպասման,
Մեր անտանելի ցաւերին՝ բժիշկ,
Մեր տրտմութեանը՝ զուարթ տեսութիւն,
Նաւաբեկութեանն՝ անդորր յուսալի,
Յուսաբեկութեանն ողջոյն պատուական,
Մեր կործանմանն փրկութիւն հաստատ,
Մեր եղծուած հոգուն՝ կնիք կենդանի,
Մեր խարխուլ հիմքին խորան սրբութեան,
Ջլատուած հօտին մաքրազարդ գլուխ,
Երկփեղկուած մարմնին միութիւն անքակտ,
Մեր խառնակ մտքին օրէնք տեսանող,
Մեր փակուած լեզուին՝ բարբառ քաղցրածին,
Մեր քիմքին բուրմունք անթառամ ծաղկի
Դու՝ կարկաչահոս ընթացք ու գալուստ,
Արքային յղեալ նոր հրովարտակ,
Սուրբ Հայրապետին բացուած քարոզգիրք,
Ջինուորականին զրահ-հրեղէն,
Իսկ շինականին՝ օրհնանք ու բարիք,
Դու՝ աւետաւոր բարի հրեշտակ,
Դու՝ մոլորեալին եղար առաջնորդ,
Բացեցիր կոյրի աչքերը խաւար,
Կաղին տուեցիր ընթացք ճշմարիտ,
Խուլին տուեցիր ըմբռնելու կերպ,
Իսկ ծարաւեալին՝ ջուր հրաշալի,
Մշտնջենաբուխ աղբիւր կենարար,
Եղար բոլորի փրկութեան ծառը,
Տնօրինութեան հանճար դու եղար,
Անձնաւոր Տաճար,
Տաճար Սրբութեան
Ու հրաշագործ

Աղաղակ

Դու՝ Աւազան,
Միւռոնաթափ քո գրերով—
Դու հեղեցիր շնորհը սուրբ,
Մկրտեցիր ազգն համօրէն
Որդեգրութեամբ Տեառն Յիսուսի
Մաքրողական քո պարգեւով,
Աղաւնակերպ իջմամբ հոգւոյն
Դու զգեցար գիրն Աստուծոյ
Նախ քո մտքում լուսաւորուեց
Աստուածային ծագմամբ խորին,
Յետոյ միայն ծաղկեց-յորդեց
Ու վարարեց սիրտն ամենքի,
Իսկզբանէ նախ մարմնացաւ—
Գիրը հայոց
Քո հանճարի խռով մտքում,
Յետոյ միայն այն տարածուեց
Հոգուդ խորքում,
Ապա՝ սրտիդ մեջ կոհակուեց,
Յետոյ արեան քո հոսքի հետ

Իր հրեղէն վառ մարմնով
Քո հողեղէն մարմինն ամբողջ
Իր մէջ առաւ
Ու աւարտեց քառասնօրեայ
Շրջանն իր բարկ,
Յետոյ միայն ցօղուեց խաղաղ
Քո սրտից դուրս
Ու անձրեւեց նա յորդառատ
Ու բաշխուեց անմնացորդ
Բոլոր-բոլոր
Ամենեցուն,
Ու բոլորը մէկտեղ դարձան
Քո գիտութեանն արժանաւոր
Դու՝ Աւազան,
Երգ փրկութեան,
Համատարած հնչող-կանչող,
Մկրտութեան սուրբ խորհրդի պատրաստութեան
Ահեղ գիտակ
Ամենօրհնեալ,
Երկայնամիտ,
Այդ լոկ քեզնով, այդ լոկ քեզնով
Եղաւ մեղաց սուրբ թողութիւն,
Օտար խօսքից
Ու գրերից,
Օտար մտքից
Ու մեղքերից.
Ով Աւազան ամենաբոյժ,
Դու՝ կարապետ ու անդրանիկ
Մեր դպրութեան
Ու ծաղկածին մեր քերթութեան

Կանթեղ

Դու՝ նորոգ կանթեղ
Քո անշէջ աչքով .
Սուրբ Լուսաւորչի անմար կանթեղի ցոլքերից սնուած,
Նրա այրումից կրկին բորբոքուած անմեկնելի լոյս·
Արեւագալի մարմնացող ծնունդ,
Բարկ առաւօտուայ զուարթուն մանուկ
Եւ անդորր օրուայ արի պատանեակ,
Իսկ երեկոյեան՝
Ծաւալուող պատկեր
Եւ այր իմաստուն

Օ՛, շնորհ բարի,
Կենաց կոչումիդ յաւերժ անսասան
Քո զաւակներին դու երեւացիր
Անամպ երկնքի ծագումով անճառ,
Ով փայլակնացայտ
Կանթեղ մեծագործ

Դու կանթեղ, կանթեղ, յաւերժ ճառագող
Լուսափայլ Աստղի հրեղէն խաղով,
Դու՝ վերասրբող անարատաբար
Եւ վայելչապէս բաշխող-շնորհող,
Ով կենդանութեան առաջին թռիչք
Եւ արեգակի հրափայլ ծագման
Չտարուբերուող առաջին ծնունդ,
Ով երկնային Տան բարւոք բնակիչ,
Ով երկնային Տան միակ Այցելու,
Երկնի եւ երկրի բարի հաշտարար,
Յաւերժ ճառագող,
Անկէզ ու անշէջ
Սրբափայլ կանթեղ,
Ինչպէս արեւի փայլը լուսատու
Դու մի դադարիր մեզ լուսաւորել,
Դու երկնից առկախ անշէջ լուսատու,
Դու երկիրն ի վեր արթուն յուսատու,
Յաւերժ հոգածու քո երկրի հողին
Մենամարտելով ընդդէմ խաւարի,
Ընդդէմ բռնութեան ու ընդդէմ մահի
Դու տարածեցիր լույսը քո հոգու
Ու դու յաղթելով զոյգ վիշապներին
Ու բազմահնար նրանց փորձութեանց
Յաղթանակեցիր դու լիագումար
Ու առանց երկտեղ դաշինք կնքելու
Դու հռչակեցիր փառքդ յաղթական
Որով եւ մեք
Փառաւորեմք
Յաղթութիւնը
Քո պատուական



Դու՝ Աշտանակ,
Կերոնաբարձ ու մոմակիր մանկանց փոխան
Յար լուսատու բազմաստեղնեան ..
Դու՝ Աշտանակ,
Բայց ոչ ցցուն մէկ բնանի,
Ոչ էլ ոսկեայ եօթնաստեղնեան
Այլ՝ նոյնաչափ-երեսվեցնեան
Դու ՝ ջահավառ,
Դու՝ բազմաչեայ քերովբէից դասի նման
Քո լոյսերով մեզ մօտեցող,
Մենք՝ ջահընկալ,
Ի քեզ անկեալ
Աղերսեցի՛նք պաղատանօք
Ձեռնադրութիւն ջահընկալի
Ո՛վ վեհագոյն պարգեւատու,
Բարձունքներից առաքեցիր սէր ու շնորհ,
Իսկ մենք եղանք ընդունարան
Երեսվեցնեան լի շնորհաց·

Ո՛վ աշտանակ անշէջ լուսոյ,
Արարչական սիրով լեցուն
Խաւարի մէջ լոյս ծագեցնող
Մեծապայծառ աւետիքով
Օրինեմք զքեզ մեք անդադար
Օրիներգութեամբ հրեշտակական
Դու Աշտանա՛կ,
Խաչակրօն,
Աստուածպարգեւ սուրբ խորանին

Դու Աշտանա՛կ,
Շնորհաբաշխ,
Հաւատաւոր պարտէզի զարդ

Դու Աշտանա՛կ,
Հոգեկրաց,
Վերընկալեալ փառք պատուագոյն

Դու՝ Աշտանա՛կ
Առատաբոց

Դու՝ Աշտանա՛կ,
Յաւերժ կանգուն

Հայ դպրութեան
Սուրբ Սեղանին

Աղոթք

Դու՝ երկնագոյն ամպհովանի,
Հիւսք երփներանգ,
Ուր բեհեզի ու որդանի շողերն անմար
Խաղ են բռնում Օշականի դաշտերի մեջ
Արագածի ու Մասիսի դէմ-յանդիման,
Շողն են խլում արեգակի,
Հիւսում չքնաղ մանրանկար
Ո՛վ կապտաջինջ,
Ո՛վ մաքրափայլ,
Ով ոսկեթել ու հրաբորբ,
Մաքրահնչիւն, ծիրանափայլ,
Ո՛վ տարածուող ու տարածուն
Անպարագիր ամպհովանի
Ասքանազեան վսեմ ազգի

Ո՛վ առագաստ-ամպհովանի,
Յաւերժ արթուն,
Լուսատեսիլ պաշտպանութեամբ
Ամպ հովանի
Եւ սիւն լուսոյ

Ո՛վ հայրենի աւանդութեան սուրբ ժառանգորդ,
Նրա ազնիւ վսեմ խօսքի մեծ քերական,
Ո՛վ ճանապարհ անոտնահետք

Հրաշալի քո տեսութեամբ —
Դու ձեւեցիր տառերն հայոց
Եւ երկնաձեմ առագաստին
Դրոշմեցիր գունա՛կ-գունա՛կ,
Պսա՛կ-պսա՛կ,
Լուսապսա՛կ,
Ու զօդեցիր փառքն հայրենի
Անճառ Բանին արժանաւոր,
Ո՛վ լուսազարդ ամպհովանի,
Երկնից խորան
Զմայլելի հոգածութեամբ
Քո մէջ առար անմահութեան
Պատկերն անանց
Հրաշազարդ նոր կոչումով
Ու ճշմարիտ ընտրութեամբ
Քարոզեցիր խօսքն անմատույց,
Բայց այս անգամ քո գրերով

Դու առաջին
Սպասաւոր,
Դու՝ առաջին դպիր-գրիչ,
Դու ժիր մշակ, անպարտելի
Քո ուսուցման,
Անմատչելի դաւանութեան
Չնահանջող
Առաջընթաց

Ո՛վ լուսաձեմ ամպհովանի,
Դու երկնային գրերն հայոց
Վար բերեցիր դէպի երկիր,
Ի փրկութիւն քո չարչարեալ
Ու տառազուրկ ազնիւ ազգի



Դու՝ գՕտի, գՕտի,
Արշալոյսները իրար միացնող,
Վառ համբոյրները իրար ճարմանդող,
Հայկազեան հոգու մտքերն ագուցող,
Իրարու բերող,
Իրար շաղկապող
Դու ոսկէ կամար
Դու իմաստացնող հանճարի երկՃիւղ,
Իրար միացնող Հայքերը երկու,
Աղօթքին նայուածք պարգեւող հաստիչ,
Համբերութեանը՝ սխրանք ներարկող,
Օտարութեանը՝ խարազատութիւն,
Իսկ գերութեանը՝ միաբանութիւն·

Դու առանց լացի
Ու հեկեկանքի
Հայոց հոգիներն իրար միացնող,
Պտոյտ գործեցիր որպէս մի գՕտի,
Ինչպէս արեւը երկնակամարում

Հայոց բաժանեալ հողերի վրայ,
Ու զաւակներիդ սիրտը տրտմագին
Փարատեցիր դու խնդութեան երգով,
Առաքելական քո սուրբ հաւատով
Դու քո որբ ազգին
Տուեցիր սխրանք,
Գերագոյն պատիւ,
Անմահութեան տունկ,
Գեղեցիկ անուն,
Փառաւոր պատկեր
Ու իրական զարդ
Հին սխրանքներին՝
Նոր հերոսութիւն,
Մեր անգիր վէպին՝
Գիր-կշռոյթ-ոգի,
Մեռած-թաղուածին
Նոր կենդանութիւն,
Մարտիրոսների
Չարչարանքներին՝
Վարք-գովեստ ու ճառ,
Իսկ ժողովրդիդ՝
Արժանավայել
Մի նոր պատմութիւն

Դու՝ գոտի, գոտի,
Հինը ու նորը
Իրար ճարմանդող,
Արքայավայել,
Ազնուաբարոյ
Նոր պարծանք փառքի

Երգարան

Դու վառ երգարան
Անթիւ երգերի,
Բիւր-բիւր ձայների,
Մեղեդիների ու հնչյունների.

Քո սուրբ քահանայք երգաբանելով
Տարածում էին քո ժողովուրդին
Գիրդ փառաւոր,
Իսկ նորազուարճ ժողովուրդը քո
Հայոց աշխարհի դրախտում տնկեալ
Բազմագոյն ակամբք
Առաքում էր քեզ
Աղօթքն իր հոգու
«—Ո՛վ Տարօնածին պարգեւ կենդանի,
Ո՛վ հրաշագեղ ծնունդ փրկական,
Ո՛վ գարնանաբեր հնչում հայրենի,
Քնար քաղցրախօս մեր նոր արթնութեան»:

Քեզ այդպէս էին
երգում ու օրհնում
Մանկունք քո երկրի
Եւ քո գրերի
Որովհետեւ դու եղար բարեհամ,
Վտակ բարեհոս,
Որ հորդեց սիրտը
Հայաստան երկրի
Դու վառ երգարան
Անթիւ երգերի,
Խորհուրդ սեփական,
Բերկրանք հրեղեն
Եւ կամք այգածին
Էիր բարեգութ
Ի յերկիր խոնարհեալ սրբազան Աջով,
Էիր խնամող
Ի յերկիր բերեալ քո շնորհներով,
Էիր կարեկցող
Ի յերկիր բերեալ քո պարգեւներով,
Էիր եւ դու ես
Եւ լինելու ես այժմ եւ յաւէտ

Խաչվառ

Դու մեր հաւատքի
Խաչվառ սրբազան,

Մեր պատարագի դրօշ-առաջնորդ,
Քո գրով հիւսուած ահեղ խորհրդի
Մեծ պատարագիչ
Ու յար ձայնակցող,
Փրկական օրհնանք
Ու անուշ տաւիղ

Միշտ բարեբանող ձայնով անդադար
Եւ միշտ ունկնդիր սրբութեան ձայնին՝
Ցնծութեան երգով քեզ ենք պարտական,
Քեզ՝ հոգեւորիդ,
Քեզ՝ պարգեւողիդ,
Քեզ՝ առաջնորդիդ,

Որովհետեւ դու հիմնեցիր տաճար
Բարձրագոյն ձեւով,
Յետոյ հաստեցիր

Օծմամբ քո մտքի
Եւ զարդարեցիր
Անարատ ոճով
Ու կտակեցիր
Քո ժողովուրդին
Եւ այդ տաճարին կարգեցիր փառքով
Գիրն ուսուցանող բազում մշակներ,
Համաձայնեցրիր դասերը նրա
Մէկն ուսուցանող,
Միւսն ուսանող

Ո՛վ վեհ դպրապետ մշտնջենաւոր,
Մշտնջենախօս բարբառ քաղցրաբոյր,
Պատուական գրի դու մեծ տարածող,
Պաղատանացն օգնականութիւն,
Անմարմին խօսքի զինուոր քաջարի,
Փակուած խօսքերի ազնիւ վերծանող

Դու խրախուսիչ,
Դու քաջալերող
Ճառագայթարձակ ճշմարիտ տեսուչ,
Կենաց դպրութեան լուսէ մկրտիչ,
Ծովածուփ կեանքի բարի նաւապետ,
Միաբանութեան ամրակուռ խարիսխ

Այսօր մեծապէս
Պանծացեալ ցնծա
Հայաստան աշխարհ,
Եւ յիշատակդ տօնէ սրբութեամբ,
Ո՛վ Տարօնածին անթառամ Պսակ



Դու թագ քարակուռ
Պճնեալ գրերով,
Իսկ ժողովուրդդ միակ թագադիր
Դու միակ թագը մեզ ժառանգ հասած
Եւ մեզ կտակուած բարերարութիւն
Նախախնամուած լուսապսակով,
Մեզ արթուն պահող միակ հրաման,
Մեզ զգաստացնող կոչնակ քաղցրալուր,
Հոգու օթեւան,
Մտքի տաղաւար

Մարմնով լուսատու
Առ քեզ կոչեցիր զհեռացեալսն,
Քո իմաստութեան բաժակն ըմպելու,
Եւ կախարդելու
Հանճարիդ խօսքով,
Որովհետեւ դու թարգմանել էիր
Գիրը սրբազան ու հնչեցրել
Քո սուրբ բարբառով.
«— Ճանաչել խրատ
Եւ իմաստութիւն
Եւ հանճարի խօսքերն իմանալ»

Առ քեզ կոչեցիր զհեռացեալսն,
Որ մերձենային
Քո սուրբ խորանի փրկական լոյսին,
Առ քեզ կոչեցիր զհեռացեալսն
Քո ծառայական
Աշակերտութեան
Առ քեզ կոչեցիր զմոլորեալսն,
Որ դարձնէիր նրանց ընտանի
Ի նոր գիտութեան սուրբ ճշմարտութեան

Նրանք ունկնդիր
Քո նոր ղօղանջին
Եկան ու հասան տեղիս ցնծութեան
Քո իմաստութեան բաժակն ըմպեցին,
Եղաւ հարսանիք,
Եղաւ խրախճանք
Մտքի ու Ոգու,
Գրի, դպրութեան,
Եւ եղեւ բարի օրն այդ յայտնութեան
Եւ եմուտ գիրը ի Տունս Հայոց
Եւ եղեւ բարիք
Եղեւ օրհնութիւն
Եւ ետես Աստուած զգիրն, զի բարի է
Եւ ասաց Աստուած
– Եղիցի
– Ամէն

Տաղերգ

Դու վառ տաղաւար,
Դու խնամարկող,
Դու ապրեցուցիչ,
Ժամանակների յաւիտենական
Գերագոյն թռիչք,
Քո անչափելի խորութիւններով
Դու մեզ մաղթեցիր մի վառ աւետիս,
Դու մեզ յանձնեցիր պարգեւ գերազանց,
Մեզ կտակեցիր գիտութիւն անբաւ,
Հողմի փոխարէն՝
Անձրեւ քաղցրաշիթ,
Զարհուրանքի տեղ
Անդորր զուարթուն,
Թշուառութեան դէմ՝
Պարծանք հոգեւոր,
Անկման փոխարէն՝
Թռիչք երկնասլաց,
Իսկ խաբկանքի դէմ
Անհուն կախարդանք
Ու փայլ յարութեան

Անյայտութեան դէմ՝
տեսիլք մարմնական,
Ընդդէմ մոգութեան՝
մարգարէութիւն,
Ընդդեմ ամլութեան
ու բիրտ ծուլութեան՝
Նախանձայարոյց
ոգի ճգնութեան
Ու պտղաբերման
յարուցեալ ամառ,
Ընդդէմ հերձուածի,
օտար բռնութեան՝
Մաքրարար աղօթք,
ուղղափառ հաւատք,
Պատերազմի դէմ
նորահրաշ դադար,
Ընդդէմ կործանման
ահեղ յաղթութիւն,
Որ ձգուելու էր
դարեր ու դարեր,
Առանց նահանջի,
առանց պարտութեան

Յորժամ հարսնացեալ գրքերը քո հիր
Միացան սիրով մագաղաթներին,
Ծնուեցին մտքի
Ազնիւ պտուղներ
Եւ թանձրացումը նրանց հուրհրան
Կազմեց Տաճարը
Մեր նոր Դպրութեան

ԶԱՆԳԱԿԱՏՈՒՆ

Դու՝ զանգակատուն
Քո զանգակներով,
Քո լեզուակներով
Երեսունը վեց
Բոլորն էլ ձայնող, ապրող, շնչաւոր,
Միշտ ախորժալուր ու աւետաւոր,
Իրենց ձայներով հաստատ-հարազատ
Դէպի արեւելք
անվերջ ղողանջող,
Դէպի արեւմուտք
ղողանջող անվերջ,
Եվ դէպի հիւսիս
կրկնակի ձայնող,
Եւ դէպի հարաւ՝
եռակի ձայնեղ,
Կանչող,
ծանուցող,
քաջալեր
ձայնով,
Օրհնաբաշխ ղողանջ,
Անաղօտ պատգամ,

Անվերջ փութացող
Ու չերկնչող
Հզօր արձագանք,
Տնօրինաբար
դու
հրաւիրող
Փարելի բարբառ,
Սրբափայլ պատգամ

Դու զանգակատուն
Քո զանգակներով,
Քո լեզուակներով
Անվերջ ղօղանջող

Դու զանգակատուն,
Դու չդադարող,
Հեռու ընթացող,
Երկինք բարձրացող
Դէպի արեւելք՝
տարածուող անվերջ,
Դէպի արեւմուտք
անվերջ տարածուող,
Եւ դէպի հիւսիս
ընթացող անվերջ,
Եւ դէպի հարաւ
անվերջ ընթացող
Դու զանգակատուն
Քո զանգակներով,
Դու աւետաւոր
Քո լեզուակներով

ՄԲԷԹ

Դու՝ գմբէթ երկնի,
Գմբէթ խաչակիր զարդուած տառերով,
Տեղի զուարթնոց,
Փրկութեան փարոս երկինք բարձրացած

Դու գմբէթ անհաս,
Երկնային դրան օթեակ հոգեւոր,
Առաջին լոյսի հրճուանքից արբող,
Նրա ներդաշնակ համբոյրից անխօս
Ինքդ վեհացած,
Ապա լուսարար գգուիչ քո տեսքով
Մեզ ողջույն յղող
Առաջին օրհնանք·

Տեառնագրումիդ մենք երկրպագու՝
Ծնրադիր, խոնարհ,
Հայում ենք դէպ քեզ,
Որ մխիթարես
Եւ լուսաւորես

Քո անապական նայվածքով բարի
Եւ անմահարար լոյսիդ շողերով
Փարատիր,
Մաքրիր,
Մշտնջենաւոր
Քո անմահ գրի
Կայծերով վառման,
Որ առաւել է —
Քան բոցն հուրհրան

Դու թագաւորիր
Մեր հոգիներին
Եւ մեզ պարգեւիր
հացն հանապազօր՝
Աղուած գրերիդ
բոյր ու բուրմունքով

Սկիհ

Դու՝ սկիհ, սկիհ,
Մաքրազարդ ու սուրբ
Դու քո մէջ առար
Քո ժողովուրդի երազները բարկ
Եւ վառ իղձերը նրա սպասման
Նուիրագործման սրբազան դողով
Ազդարարեցիր ծնունդը գրոց
Ու դու բաշխեցիր
Որպէս բաղարջ հաց,
Ջերթ կարմիր գինի
Սուրբ հաղորդութեան խորհուրդի նման
Տառերը քո բորբ՝
Նշխար առ նշխար,
Տառերը քո տաք՝
Կաթիլ առ կաթիլ

Դու՝ սկիհ, սկիհ,
Մատուցարանի գոհար սրբափայլ,

Ընծայարանի խունկ անուշահոտ,
Վերափոխելով խորհուրդը խորին
Մեզ պարգեւեցիր
Համեղաճաշակ
Մասը փրկարար
Դու սկիհ, սկիհ,
Մեր հայրենի տան,
Երկնամերձ, անհաս
Սկիհ սրբազան

Դու հաղորդութեան
Առլցուն պաշար,
Մեր ժողովրդին
Սրբութեան պաշտպան

Երկրառաք սկիհ,
Սկիհ երկնագնաց,
Դու առաջընթաց,
Մենք քեզ հետևող

Մեր մտքի սկիհ,
Մեր հոգու հնոց,
Դու անմահարար
Սուրբ Մեսրոպ Մաշտոց



Արշալոյսի ամենաջինջ
Երակի մէջ յար խայտացող
Կարմիր գինի

Սրբագործուած բարկ արեան զոհ,
Սակայն առանց ճենճերումի

Գիշերուայ մեջ խաւարային՝
Պարահանդէս նուիրումի .

Հաղորդութեան սկիհի մէջ
Արիւն փառաց Տէր Յիսուսի

Մշտահոլով երկնքի մէջ
Յարութեան շող այգաբացի

Երկնից երկիր, երկրից երկին
Քառաթեւեան պատկեր խաչի..

Բարեզարդ սէր հաղորդութեան
Ու միութիւն Ոգու հացի ..

Գինի ծնող, գինի սնող,
Աստուածութեան յաւերժ կանչի

Արշալոյսի ամենաջինջ
Երակի մէջ յար խայտացող
Կարմիր գինի...

Կեանքում յաւերժ սէր բողբոքող՝
Մշտակարկաչ գինի յոյսի

Հաւատ հաստող, սէր նորոգող՝
Մշտայաւերժ գինի լոյսի ..

Դու մշտաշող ու պարգեւող,
Պատարագող անմեռ գինի .

ՋՈՒՐ

Դու՝ կենաց ջուր,
Տարօնաբուխ աղբիւր վճիտ,
Ոռոգումով քո մաքրահոս
Ծաղկեցրիր հայոց մտքի
Անդաստանը խոպանացեալ,
Դու մաքրեցիր
Գալարումով քո մաքրաջինջ
Կոհակ-կոհակ,
Հայոց Ոգու հերկն անազնիւ,
Քո մաքրութեամբ արեւաջինջ,
Պայծառութեամբ ասպետական,
Վճիտութեամբ ազնուական,
Համեղութեամբ արքայական,
Կոհակումով խրախճական,
Դու հոսեցիր
Տաճարն ի ներս մարմարակերտ
Եւ հիմնեցիր
Մկրտութեան սուրբ աւազան,
Որտեղ պիտի վերածնուէր
Ազգն հայկազեան
Քո խօսքերով հայրենածին,

Յետոյ պիտի ճակատն օծուէր
Կոհակումով սուրբ միւռոնի
Անբիծ, մաքուր ու անաղարտ,
Որտեղ պիտի ազնուանար
Ու պճնուէր ազգդ արի
Վայելչութեամբ միւռոնահաստ
Ու խնկապատ ու անպատում
Ելնէր մարտի վասն ինքնութեան,
Վասն սիրոյ ու հաւատքի,
Յետոյ տրուէր անմահութեան

Դու կենաց ջուր,
Առատահեղ,
Առատաբուխ,
Միշտ մաքրահոս ու մաքրաձայն
Հոգիներում մեր անջրդի,
Մենք կարօտող
Ու ծարաւեալ
Քո հեղումին խաղաղարար,
Մենք սպասող
Ու հաւատող
Քո բաշխումին ու վատնումին
Կեանք պարգեւող
Հեղուիր,
Ցողուիր,
Շաղուիր,
Մաղուիր,
Հոգիներում մեր ծարաւեալ,
Ով կենաց ջուր,
Աղբիւր վճիտ
Տարօնաբուխ



Դու կենաց հաց,
Դու հոգեկաց Հացեկացի,
Դու բաշխուեցիր նշխար-նշխար,
Որպէս մասունք հաղորդութեան,
Զերթ լոյսի շող մայր ակունքից,
Որպէս օրհնանք խաչի ծոցից

Եղար պայծառ վայելչութեամբ,
Եղար ծորուն հոգեւոր երգ,
Եղար աղօթք դու բարձրագոյն
Խորհրդական եղար արի,—

Խորհրդակատար նորաստեղծեալ,
Հրաշափառ վերադիտող,
Կենդանարար ուսուցանող,
Սքանչելի ծանուցանող

Դու կենաց հաց,
Դու հոգեկաց Հացեկացի,
Դու բաշխուեցիր անմահ հոգով,

Որպէս անձրեւ գարնանաբոյր,
Որպէս հրճուանք արեգակից
Դու բաշխուեցիր կենդանարար
Ու տրուեցիր նշխա՛ր-նշխա՛ր,
Սրբացրիր մի ողջ աշխարհ
Սրբացրիր մի ողջ աշխարհ
Կերպարանքով քո մաքրատեսք,
Բուրիր, խայտա յանձինս մեր,
Ո՜վ կենաց հաց Հացեկացի·

Ո՜վ կենաց հաց հրաշակերտ,
Ո՜վ սրբութիւն աւետաբեր,
Արքայութեան մեր ձգտումին
Դարձիր պաշտպան ու դարձիր Տէր



Դու աղ կենդանի,
Դու մատակարար,
Դու համեմեցիր մեր սնունդն անհամ-եղծուած-անալի
Եւ պարգեւեցիր ճաշակման հրճուանք,
Որ ճաշակէինք մենք բանք իմաստնոց,
Խորհուրդն արարչի
Եւ տէրունական լոյսը փրկարար

Բիւր-բիւր դարերի դու անգիր լեզու,
Բիւր-բիւր դարերի դու անգիր երազ,
Բիւր-բիւր դարերի դու անգիր կարօտ,
Բիւր-բիւր դարերի դու երկունք վառման,
Բիւր-բիւր դարերի անգիր սպասում

Վերջապէս դու քո ծնունդն ունեցար
Հանճարի այրուող արգանդի խորքում
Եւ աշխարհ եկար հանդերձ ոսկեհուռ
Երեսունըվեց մարգարիտներով,
Բոլոր շուրթերին երկրպագելի
Եւ հասանելի սուրբ դաւանութիւն

Դու աղ կենդանի,
Դու մատակարար
Առաջնաճաշակ

Ճոխաբար տրուող, երբեք չհատնող,
Կենսաբեր բերկրանք անվերջ մօտեցող,
Քառակողմ երկրի
Պարգեւ ըղձալի

Դու լուսաւոր արեան երանգ,
Մթութեան մէջ փայլ-ճառագայթ
Կենդանակիր քո տարածմամբ,
Որպէս նշխար անմահ լուսոյ,
Համեմեցիր ազգդ համօրէն
Աղ կենդանի,
Սերմ ծննդոց
Համայնահաստ

ԲԵՄ

Դու Աչք հսկող,
Քարոզի Բեմ,
Մեծապատիւ քո քարոզին
Ազգն ունկնդիր,
Համագումար իր կարօտով
Նա անյագուրդ
Ճաշակեց քո ազնուական
Շառափները
Ծիրանաւոր
Հանց գեղեցիկ ստինքն անուշ
Ընծայեցիր կաթը բեմիդ
Մաքրամաքուր ու քաղցրահամ
Արբեց ազգդ գինովութեամբ
Աստուածընծայ
Քո խօսքերի օրհնութիւնով
Ու բարբառեց
«— Ովսաննա՛ ի բարձունս,
Օրհնեալ, եկեալ, անուամբ Տեառն »

Քեզ փառք յաւէտ
Օրինեալ կրկին ու վերստին,
Քեզ գոհութիւն
Յամենայնի օրհնաբանեալ,
Քեզ օրհնութիւն
Յաւիտեանս յաւիտենից,
Որովհետեւ
Արթնացրիր քո զօրութեամբ
Ազգդ թմրեալ,
Բազմազեղուն շնորհներով
Վհատութեան դաշտերի մէջ
Տարածեցիր ամենալոյս
Խօսքդ ծաղկեալ
Ու ստեղծիչ
Օրինեա՛լ ես դու,
Յաւէտ օրհնեալ

Ստեղծ

Դու լուսաւոր եւ լուսազարդ
Ատեան դպրաց,
Հանդիսարան,
Հաւատարիմ սահման քաջաց,
Բայց ոչ զէնքի ու զրահի,
Այլ դպրութեան,
Վեհ դպրութեան,
Որ մեզ համար հանդիսացաւ
Նոր պատուիրան՝
«— Սահման քաջաց գիրն իւրեանց»

Հայոց աշխարհ
Էիր հզօր դու երբեմնի
Ու վեհագոյն
Ազգերի մէջ հիւսիսական
Զէնքի զօրութեամբ,
Քաջութեամբ տբնող,
Քաջութեամբ յաղթող,
Քաջութեամբ պատուող,
Զի կարգել էիր
Դու քեզ պատուիրան

— Սահման քաջաց
Զէնն իւրեանց
Բայց կոտրուեց կորովը քո
Ու ջարդուեցին զէնքերը քո
Ընդդեմ զօրաց օտարական
Ու դու դարձար թոյլ ու անզէն,
Իսկ մարմնով բաժան-բաժան
Այդ պահին է, որ ճառագեց
Տարօնածին միտքն հանճարեղ
Աւետելով ամենեցուն
— Սահման քաջաց՝
Գիրն իւրեանց

Ու արշաւեց գիրն հայրենի,
Որպէս դրօշ նոր յաղթութեան
Դեռ մղում է մարտ ու կռիւ
Դաշտերի մէջ մաքառումի

Չի նահանջում մարտն այդ անհաշտ,
Արշաւում է, յաղթում յաւերժ,
Տառերն իրեն դարձնելով վաշտ
Հին դարերից առնում վրէժ

Խորան

Դու սուրբ խորան, սրբատեղի.
Օշականում ի պահ տրուած յարութեան լոյս,
Քեզ, ովսաննա՛
Սուրբ աղօթքով մեր հայրերի ամենիմաստ,
Որոնց հիւսած աղօթքն անսանձ
Կոհակումով բազմախորհուրդ
Սկիզբ առած քո հաւատքից
Տարածուել է
Ու տարածւում
Օրհներգի պէս
Մինչ օրն այս սուրբ,
Իսկ օրն այս սուրբ ձգուելու է
Դարերի մէջ անհորիզոն՝
Գաւառ-գաւառ,
Երկրէ-երկիր,
Սուրբ Սրտի մէջ հայոց հողի,
Հայեացքի տակ
Հանճարազգօն,
Միշտ, շարունակ
Միածնաէջ սուրբ խորանի..

Դու սուրբ խորան, սրբատեղի,
Դու տարածուող
Ու տարածուն,
Արշալույսի ղօղանջ անանց,
Հեզահոգի,
Զուարթամիտ,
Օշականից մինչ Հացեկաց,
Հացեկացից-Էջմիածին
Փայլ է բռնել տէրունական
Խաչափայտը հրաշածին:

Փառք քեզ, դպիր ու արարիչ,
Ո՛վ գերազանց մեր տառաստեղծ,
Ո՛վ մարգարէ մեր սուրբ խօսքի,
Քեզ փառք յաւերժ, յավերժ փառք քեզ



Բանալի

Ով բանալի կորովամիտ,
Դու բացեցիր դռներն յուսոյ,
Դու բացեցիր քո տիրական գրերով նուրբ
Անծայրածիր դռները փակ
Ու փոխեցիր վերջալոյսի բոցը մարող
Արշալոյսի արծաթեայ ծով այրուող լոյսի,
Որից վազեց արագահոս,
Համեղաբան
Բարբառն անուշ մեր հայրենի,
Լուսաբողբոջ իր մարմնով վահանազգեստ·

Ու տարածեց,
Ու տարածեց
Երգը այրուող
Դաշտերի մէջ ոսկեցորեան·

Դու բացեցիր,
Դռներն յուսոյ,
Դու բացեցիր երկինքը փակ,
Եւ երբ բացուեց երկինքը փակ,
Իջաւ հոգին հրածորան,
Իջաւ հոգին շնորհապերճ,
Իջաւ հոգին պսակազարդ,
Իջավ հոգին արեգնակերպ,
Եւ զարդարեց երկիրն հայոց,
Շնորհներով իր փառահեղ



ԲՈՒՐՎԱՌ

Դու արծաթեայ հնչեղ բուրվառ,
Շանթ բեկանող,
Խաւար ցրող,
Սպառազէն յոյս գեղեցիկ,
Ծանրաբեռնեալ արդարութեան բուրեան խնկով
Յար ծխացող, անկշռելի,
Բիւր գինդերի շարանն հիւսող
Բուրմունք անանց
Ու աստղածոր երկնքի մէջ
Պայծառ աստղի նման շարժուող շողուն ընծայ.
Ո՜վ բանիբուն,
Ո՜վ ճոխիմաստ,
Բազմահազար արշալոյսներ
Դու բորբոքող անշէջ կրակ
Ու անթեղուած կանթեղ սիրոյ
Միշտ պերճօրէն բռնկուելու,
Կամք ինքնածին, մրրկածուփ,
Օ՜, ալեծուփ.
Ո՜վ մշտավառ.
Հնչեղ բուրվառ ..

Քո զնգոցով հրաշանուն
Ու ղօղանջով քո քաջալեր
Աւետեցիր դու ամէն կողմ
Ճշմարտութիւնն ամենաբեր:

Դու վանեցիր օտարութեան
Երկրակրօն ձայները սին,
Խափանեցիր վհատութեան
Չարաբարբառ կեանքը հեշտին

Օրհնեա՛լ, օրհնեա՛լ, յաւէտ օրհնեալ,
Ղօղանջներով քո տիրաբար,
Ճշմարտութեան աւետաւոր,
Սիրոյ անափ կեանքի բուրվառ

ԳԻՇԵՐՔ

Քո գաւազանի անեղ զօրութեամբ
Դու հաստատեցիր խարիսխն հաւատոյ,
Որպէս տեսանող՝ քո գաւազանով հրահանգաիղձ
Վտակն իմաստից բխեցրիր ցնծուն,
Եւ ցօղազարդեալ տառերն հոգելիր
Պար եղան զուարթ
Եւ գեղեցկացան
Հայոց անջրդի դաշտում անապատ,
Եւ ծլարձակուեց ծառը դպրութեան.
Ո՛վ այր հոգետես,
Քո գաւազանի հիացմամբ հրէ
Լոյսի փոխեցիր խաւարն աննահանջ
Եւ արշաւեցիր դու քո տառերով,
Իսկ քո տառերը՝
Սրբող, լցուցիչ,
Ինքնիշխան, զօրեղ,

Իսկ քո տառերը՝
Մշտաշարժ, սրբող,
Անայլայլելի, անփոփոխելի,
Կեանք կենդանարար եւ միշտ գովելի,
Իսկ դու դասապետ նրանց ընթացքին,
Նրանց ընթացքին հաստատ, աննահանջ,
Նրանց ընթացքին միշտ առաջընթաց,
Նրանց ընթացքին հրեշտակաթեւ,
Նրանց ընթացքին միշտ վերադիտող,
Ո՜վ այր հոգետես,
Դու Ահարոնի նման գօտեպինդ
Քո գաւազանի ծաղկումին վստահ,
Գործեցիր հպարտ,
Եւ դարձար դու հայր
Վեհ ճանաչումի

Լուսամուտ

Քո միտքն հրատ զերթ լուսամուտ
Մեզ պարգեւեց լուսապայծառ
Գիրն հայրենի .

Գիրն այցելեց
Արագավազ, արագահոս,
Մշտաթրթիռ ու մշտահոս

Գիրն այցելեց
Ցնծութիւնով աւետաբեր,
Նուիրումով հրաշափառ

Դու լուսամուտ
Ու դու պայքար,
Պայքար հանդէպ խաւար նեռի,
Որն իր մթին թոյնով վարար
Փորձում էր լուռ ներս սողոսկել,
Յետոյ փակել դէմքը քո բաց,
Կամարակապ սիրտը քո թաց
Ու կործանէր հոգին քո սուրբ,

Որ աչքերն էլ քո յիրաւի
Չտեսնէին այգաբացի
Գօտեպնդուած վազքը վարար,
Բայց զո՛ւր, իզո՛ւր,
Դու մնացիր
Միշտ լազուրում
Լուսամուտն այն բաց ու պատրաստ,
Որ ծարաւ է արշալոյսի
Շառափներին հրաշք այգի,
Երկնի կապոյտ աղօթքներին
Ու Աստուծոյ անեղծ խօսքին

Դու լուսամուտ
Երգ քաղցրալուր
Երկրի վրայ երկնքի մէջ
Անճառ, անսուտ



Աստիճան

Դու, Աստիճան,
Հայրենիքի սրբությունը երկինք տանող,
Դեպի երկինք, դեպի երկինք անվերջ ձգուող,
Հայրենի տան
Անաղարտ խիղճ

Հիասքանչ քո ընթացքին
Հրեշտակաց երամն արթուն
Քեզ ուղեկցիր ու ձայնակից,
Արծաթղողանջ օրհներգներով,

Չեղար մոլոր,
Չեղար տոչոր,
Էիր զօրեղ
Ու անմորմոք,

Դու վեր ելար, ելար դու վեր,
Անցար ճամբան տառապանքի,
Մինչեւ հասար դուռն Աստուծոյ,
Ու ձայնեցիր ձայնով արի,
Յետոյ իջար երկնից երկիր,
Իջար խրոխտ հարստացած,
Գօտեպնդուած քո հաւատքի
Գոռ զէնքերով,
Որոնք դարձան
Գիր ու նշան

Ու անթեղած քո մէջ շնորհ
Ամենամեծ նուէրն Աստծոյ,
Դու բաշխեցիր նշխա՛ր-նշխա՛ր,
Նշխարն անմեռ քո տենչանքի

Ու դառնացեալ հոգուդ խորքից,
Տարածեցիր գրերն հայոց,
Ի փրկություն արդար լոյսի,
Սուրբ հաւատքի ու հայութեան



ԳԱՆԱՁԱՏՈՒՆ

Դու գանձատուն,
Քո մէջ առար գանձերն հայոց,
Որպես երկինքն աստեղազարդ
Դու մնացիր յար շողշողուն..
Դու գանձարան,
Քո տառերն են շողարձակում,
Որպէս արծաթ մի մեղեդի,
Մշուշի մէջ քերթողական
Ու լոյս սփռում,երգեր յոյսի
Քո գրերը
Ցոլում են, մնում անկէզ,
Քո սեփական երգի նման
Սուզւում խորքը այն սրտերի,
Որոնք մի պահ – վերացումով —
Գէթ ձգտում են քեզ տիրանալ
Դու գանձարան,
Դու քարեղէն ու քարակուռ,
Դու լուսաձեւ ու շողածին,
Դու պատարագ, հաւատքի տուն,
Վեմ երգի սուրբ գանձատուն

Դու գանձատուն,
Ամբարել ես քո խցերում
Տառերը քո գոհար-գոհար,
Գրերը քո՝ զմրուխտ-զմրուխտ,
Տառերը քո սուտակ-սուտակ,
Գրերը քո արծաթ-արծաթ,
Տառերը քո ոսկի-ոսկի
Դու գանձատուն
Ճնաշխարհիկ մեր հին երկրի,
Մեր ալեւոր հայոց հողի,
Քո տառերը,
Զերթ հաւատքի առաքեալներ,
Քո գրերը,
Զերթ կերոններ այգաբացի
Տարփողում են արշալոյսը
Հայ դպրութեան
Ու հաւատքի

Դու գանձատուն,
Գանձասփիւռ,
Արշալոյսի ու օրհնանքի

Խնկարան

Արշալոյսների բողբոջ աչքերից
Մաքուր արցունքներն ի մի բերելով,
Կապոյտ երկնքի ճերմակ դաշտերից
Ծաղկաթերթերի բոյրը արձակեալ
Քո մէջ առնելով
Դարձար խնկաման

Դարձար խնկաման
Ու տարածեցիր բոյրը քո անուշ
Առաւօտների թարմ շողերի հետ,
Արշալոյսների օծեալ ճակատին
Դրոշմեցիր վառ
Հաւատամքը քո
Որ գիր էր ու տառ

Խաւար դաշտերում մեռնող ու անշունչ
Դառնալով պատգամ ու Աստուածաշունչ
Նախ տալով մէկին՝ հաւատք ու օրհնանք,
Միւսին՝ գրիչ, մագաղաթ ու գոյն,
Մէկին՝ տքնութեան համբերող ոգի,

Միւսին՝ վսեմ տառապանք արի,
Մէկին՝ փորձութիւն, յաղթանակով լի,
Միւսին՝ պայքար, սէր, քնքշանք, գինի
Այսպէս ամէնքին
Բաշխեցիր շռայլ,
Ինչ որ ունէիր քո խնկամանում՝
Սէր, հաւատք ու յոյս,
Որ կեանքը հայոց քաղցրիկ աշխարհի
Դառնար գեղեցիկ, դառնար լիայոյս,

Որ էլ ամպերը
Հայոց աշխարհում
Չմթագնէին
Եւ չդառնային
Սոսկ կարկտաբեր

Ինքդ անսպառ,
Ինքդ՝ զոհաբեր,
Դարձար աշխարհիդ թագաւոր ու Տէր՝
Քո լուսապսակ
Տառերի գնդով

Սաղմոսարան

Դու սաղմոսարան,
Դաւթի քաղցրալուր ու քաղցրանուագ
Սաղմոսների հետ անվերջ հոլովուող

Հսկայ արծաթեայ տաւիղ քո ձեռքին
Դու հնչեցրիր սաղմոսները քո
Հայրենի երկրիդ եզերքներում մով
Ու ցնծաց ծաղիկ
Երկիրը հայոց —
Ու քո արիւնոտ
Երկիրը դարձաւ
Դրախտ ծիծաղկուն,
Ակունք ցնծութեան

Եւ դու երգեցիր
Բիւր-բիւր սաղմոսներ
Քո տաւղի ձայնը անուշ կարկաչուն,
Քաջարի այրին պարգեւեց կորով,
Նորածին մանկանն՝ արեւբոյր կարօտ,

Նորահարս կոյսին՝ մայրանալու ձիրք,
Իմաստուն արանց՝ տեսանելու կարգ,
Փափկասուն տիկնանց՝ սէր գորովագութ
    Եւ քո տաւիղը
    Հնչեց զրնգոն
Եւ քո տաւիղը հնչեց զուարթուն
    Եւ այդ հնչումին
    Արձագանք տուեց
    Ժողովուրդը քո
    Խնդութեամբ անծիր,
Եւ քո տաւիղը հնչեց զրնգուն
Եւ քո տաւիղը մնաց կենդանի,
    Ջերթ Ուխտի նշան
    Կնքուած քո միջեւ
    Ու ժողովրդիդ

Վարագոյր

Զինակոչումով քո բորբ գրերի
Դարձար վարագոյր
Ընդդէմ մահաբեր վայրագ հողմերի
Եւ պաշտպանեցիր,
Պատսպարեցիր
Քո զաւակներին

Իսկ վայրագ մահը ալեբախումով
Թակում էր դուռը քո սուրբ երկրի,
Իսկ դու՝ աւետող, ընթացար խրոխտ,
Դարձար պահապան քո կամքով դիւցազն,
Վարագուրուեցիր ու դարձար վահան,
Յաղթեցիր մահուան պատկերին դժնի,
Պատռեցիր նրա սիրտը ժանտաժանտ,
Որ թոյն էր թորում գիշեր ու ցերեկ

Վարագուրուեցիր վասն քերթութեան
Վասն դպրութեան
Ու գեղեցկութեան·

Վարագուրումով քո մտածումի
Լուսաւոր դարձաւ ձգտումը հայկեան,
Անցեալը դարձաւ ներկայ հաւատքի,
Ներկան գալիքի լուսաշող ճամբան
Քո տարածումին անծիր-անսահման,
Անծիր-անեզերք-անդարձ ձգտումին
Քո ժողովրդի երգն Աղօթական
Դարձաւ հաւատամք խրոխտ յուսածին

Դու բորբ վարագոյր,
Պարսպի նման
Բարձրացար անկանգ,
Զգուեցիր անդարձ,
Քո հայրենիքի
Փրկութեան համար

Դու լոյս նշխար,
Քո ճոխութեամբ զարդարեցիր
Խօսքը հայոց
Եւ պանծացրիր արժանաւոյն
Քո գոհութեամբ
Տունն հայկազեան վսեմ ազգի:

Դու սուրբ նշխար
Բարեհռչակ սփոփութեան,
Համբուրելի
Դու կենարար վեհ տեսութիւն՝
Նշխար յուսոյ,
Դու հեծութեան վախճան անեղծ՝
Նշխար լուսոյ,
Բժշկութեան սուրբ քաւութիւն՝
Նշխար կենաց,
Դու բարեգութ ու ահաւոր՝
Նշխար զօրեղ,
Դու անքննին ու պարգեւող՝
Նշխար տուիչ,

Սեպհականեալ գանձ անքննին՝
Նշխար պատուեալ,
Դու բարութեան լոյս յամեցող՝
Նշխար մտաց,
Դու սուրբ նշխար հրաշագործ
Նշխար գաղտնեաց,
Զրի պարգեւ ու կեցուցիչ՝
Նշխար տեսող,
Դու բարեգործ ու երկնաւոր՝
Նշխար գութի,
Բժշկութեան ցաւ փարատող
Նշխար կրից,
Դու քաւութեան պաշտպանութիւն՝
Նշխար վերին,
Դու ճշմարիտ ընթացք բարի՝
Նշխար քաւիչ,
Խորհրդական ողորմացող՝
Նշխար ելից,
Կենսագործող ու խնամող՝
Նշխար փրկիչ

Դու մերձաւոր,
Դրախտաւոր,
Քո մէջ առար
Մի ողջ աշխարհ

Սիրուհի

Քո անճառելի գրերի գիւտով
Դու զարդարեցիր վերնատունն հայոց,
Գրերը հայոց
Դարձան բալասան
Մաքուր, անաղարտ,
Համեմուած անբիծ ծաղկանց բոյրերով,
Խառնեցիր հրաշք արարման իւղին
Եւ քո սրբազան Աջի օրհնութեամբ
Դարձրիր սուրբ միւռոն
Իւղ անուշահոտ
Եւ այդ փրկարար լուսաւոր իւղով
Օծեցիր հերթով ճակատն ամէնքի,
Վրան դնելով կնիք տէրունական
Եւ այդ օծումով վէս, հայադրոշմ,
Կնքեցիր հերթով
Բոլոր-բոլորի
Զգացողութեան կէտերը ամէն,
Որ դառնան պատճառ բարեգործութեան

Օծեցիր հերթով,
Օծեցիր իւղով,
Օրհնեցիր սակայն հայոց գրերով
Եւ այդ գրերի լուսէ խայտումով
Կազմեցիր հայոց ծիսարանն հարուստ,
Որ դարեր յետոյ
Արժանավայել
Անունդ պիտի
Սրբօրէն կրէր

Օ, միւռոնաբոյր Մաշտոց-ծիսարան
Հիւսուած գրերով անվնասելի,
Դու խորհուրդների խորհուրդն ես անանց
Ու լուսանորոգ երգը հայութեան

Դու բժշկում ես խեղճ հիւանդներին,
Քաւում ես մարդկանց մեղքերը դժնի,
Սփռում ես շնորհք, պատուաստում հաւատք,
Հաստատում ես սէր, լոյսի պէս բարի

Բուրում ես, բուրում, բոլոր սրտերում,
Պարգեւում կեանքին լոյսը հանապազ,
Որպէս գեղեցիկ մեծ վայելչութիւն
Բուրում ես, բուրում, բոլոր սրտերում

Բուրում ես, բուրում, բոլոր սրտերում,
Որպէս օրհնութիւն, լուրթ խաղաղարար,
Որպէս կեանքի երգ ու սէր յարութեան
Բուրում ես, բուրում ու չես սպառում

Սրբատուն

Դու կեանքում եղար
Հրաշք Սրբատուն,
Լեցուն սրբերի կատարեալ կեանքով,
Նուիրեալների վառ աղօթքներով,
Մարտիրոսների սրտայոյզ երդմամբ,
Առաքեալների
Նուիրուածութեամբ

Դարձար Սրբատուն
Ու քո մէջ առար
Հայոց գրերը՝ օրհնութեամբ լեցուն,
Ի երջանկութիւն քո զաւակների
Դու տարածեցիր գրերն հայրենի,
Ինչպէս արեւն է
Տարածում իրեն,

Ինչպէս երկինքն է
Բուրմունքն իր սփռում
Կանաչ դաշտերին ու լճերին լուրթ,
Ինչպէս ծառերն են արձակում ճիւղեր
Եւ ծաղիկները ցող ու արցունքներ:

Այո, բաշխեցիր,
Որ անմահանաս
Ինչպէս ցորենի
Հատիկը մեռնող
Բազում արդիւնք է լոյս աշխարհ բերում
Բաշխեցիր հայոց գրերն հայրենի,
Որ չմնային տխուր, անթովչանք,
Անսէր, անտերունչ
Մենակ ու լքեալ

Եղար Սրբատուն
Հարուստ ու չքնաղ,
Բայց լոկ գրերով վճիտ ու ծաղկող
Մարգագետնի մէջ հայոց աշխարհի
Ուխտաւորի պէս միշտ երկինք նայող
Սրբատուն եղար
Գրերի համար

Ու մեզ դարձրիր
Քեզ երկրպագու

Ծնունդ

Իսկ քո տառերը
Ծնծղաների պէս
Աւետում էին
Երեսունըվեց
Տարբեր ձայներով
Նոյն աւետիսը
Հայոց փրկութեան

Քո ծնծղաների
Ձայնով դիւթական
Մերձեցար հայոց
Տաճարին անգիր
Եւ մատուցեցիր
Անզոհ պատարագ
Եւ խնկարկեցիր
Բոյրը փրկական

Ու պատարագեց
Գրերիդ լեզուն
Հայոց տաճարի
Անգիր խորանին
Ու դարձաւ նշխար
Սուրբ հաղորդութեան
Գրերիդ բոյլը
Լուսաւոր փայլմամբ
Եւ սրբագործեց
Խորանը վառման
Դարձնելով գրի
Սրբազան խորան

Եւ պատարագը
Հայոց գրերի
Զուարթ կարկաչեց
Հայոց աշխարհում
Եւ լցրեց մարդկանց
Սրտերն աւիւնով
Անմահ արարչին
Փառաբանելու

Իսկ քո գրերը
Դարձած պատարագ
Լոյսի շողեր են
Արարում անվերջ
Ու մեզ պարգեւում
Ապրելու ՀԱԻԱՏՔ,
Կեանքը ապրելու
Աստուածային ՅՈՅՍ,
Փրկութիւն հայցող
Դրախտային ՍԷՐ:

Վերջերգ

Քո հրաշագործ տեսիլքով պայծառ
Դու երգակցեցիր Արարչի փառքին,
Ո՛վ արդար ծնունդ՝ բոցեղէն փայլմամբ
Դու քո գալստեամբ վերափոխեցիր
Մեր արքայական փայլը հրածին,
Ո՛վ սուրբ Արարչի խորհուրդ թանձրացեալ:

Մենք երգ ենք հիւսում, վարք, աղօթք ու գանձ,
Ո՛վսաննա ձօնում քո սուրբ հանճարին,
Իսկ քո գրերը համեղաճաշակ—
Մենք վայելում ենք ցայսօր խնդութեամբ.
Քո վառ տառերը՝ ողկոյզներ հիւթեղ,
Ապրելու ձիրք են մեզ միշտ պարգեւում·

Այսօր դասակից գնդին զուարթնոց,
Քեզ մատուցում ենք բանաւոր հրճուանք,
Ո՛վ ազատարար օրէնսդիր հայոց—
Մեր տանջանքների ու մեր գերութեան,
Ո՛վ յարուցեալ հայր, մենք միշտ ծնրադիր
Քո սուրբ Խորանին երգերով մեր վառ.

Օգոստոս-Նոյեմբեր 1988

Ս Էջմիածին



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախերգ	5
Մուտք	6
Տաճար	8
Աւազան	10
Կանթեղ	12
Աշտանակ	14
Ամպիոնի	16
Գոտի	18
Երգարան	20
Խաչվառ	22
Թագ	24
Տաղաւար	26
Զանգակատուն	28
Գմբէթ	30
Սկիհ	32
Գինի	34
Ջուր	36
Հաց	38

Աղ 40
Բեմ 42
Ատեան 44
Խորան 46
Բանալի 48
Բուրվառ 50
Գաւազան 52
Լուսամուտ 54
Աստիճան 56
Գանձատուն 58
Խնկաման 60
Սաղմոսարան 62
Վարագոյր 64
Նշխար՝ 66
Միւռոն 68
Սրբատուն 70
Ծնծղաձ 72
Վերջերգ 75

Խմբագիր՝ **Գ. Ս. Օհանյան**
Գեղ. խմբագիր՝ **Խ. Զ. Հակոբյան**
Տեխ. խմբագիր՝ **Ս. Ն. Գյուրջյան**
Վերստուգող սրբագրիչ՝ **Է. Ա. Սեդրակյան**

ИБ № 582

Հանձնված է շարվածքի 19 11 90 Ստորագրված է տպագրության 18 02 91 Չափսը 70X90 1/32 Թուղթ օֆսեթ Տառատեսակ «Արարատ» Տպագրությունը օֆսեթ 2,93 պայմ տպ մամ 2,5 հրատ մամ Տպաքանակ 10000 Պատվեր 98 Գինը 1ռ 50 կոպ

Издательство «Аревик» Ереван 9 ул Теряна 91

«Արևիկ» հրատարակչություն Երևան-9, Տերյան 91

Շարված է ֆոտոշարվածքի արտադրական կենտրոնում Երևան-9, Տերյան փող 89

Набрано в фотонаборном производственном центре Ереван-9 ул Теряна 89

Հայաստանի Հանրապետության Նախարարների Խորհրդի մամուլի կոմիտեի Հ Մեղապարտի անվան պոլիգրաֆկոմբինատ Երևան-9, Տերյան 91

Полиграфкомбинат комитета по печати при СМ Республики Армения Ереван ул Теряна 91